րակութիւնը պախարակում է Ֆրանսիական հանրապետութեան կառավարութեան գործունէութիւնը: Եզուիտները յանկարծ «հերոսքեր» դարձան: Նրանց խղճում են կրկին ֆրանսիական հանրապետութեան անհամբերողութեան պատճառով տանջվածներին: Բոլոր անցեալը մոռացված է և եթէ իրանք եզուիտները աւելի խելօք և հեռատես չը լինէին այն մարդկերանցից, որոնց նրանք յիմարացրել են, նրանք կարող էին երևակայել, որ հէնց որ իրանք կը հանեն եւրոպական որ և է միապետութիւն, նրանց բաց գրկերով կընդունեն, չը բացառելով և այն երկիրները, որտեղից նրանք մի ժամանակ արտաքսվել են աւելի մեծ խստութեամբ, քան թէ իրան այժմ թոյլ է տուել Ֆրէյսինէի մինիստրութիւնը:

Ինչպէս Փարիզում de Sévres փողոցում, նոյնպէս և այն քաղաքներում, որտեղ կային եզուիտներ, այդ օրը խաղացած կոմեդիան աննմանելի արհեստով և ճարպկութեամբ էր պատրաստված: Եզուիտների արտաքսման մասին դեռ մի շաբաթ առաջ սկսեց խօսել հակահանրապետական մամուլը և այնպիսի խիստ ձևով, որ չափազանց գրգռում էր ընթերցողների ջիղերը: Կղերականութեան գըլխաւորները մի րոպէ հանգստութիւն չունէին: «Սուրբ հայրերի» հետ միասին նրանք տենդային եռանդով պատրաստում էին աքսորման պատկերները: Նախագիծը մանրամանաբար մտածված էր և խելութեամբ կատարված: Հանճարաւոր metteurs en scène (բեմ պատրաստողները) ոչ մի մանրամասնութիւն չէին մոռացել, նախատեսել էին անպասելի դէպքերը:

Փարիզի եզուիտների գլխաւոր բնակարանի մէջ, de Sèvre փողոցում, տուն № 35-ի մէջ պատրաստված էր ամենանշանաւոր ներկայացումը: Այդ բնակարանի մշտական բնակիչներից յունիսի 30-ի համար մնացին միայն նրանք, որոնք զանազան պատճառներով, իրանց դրութեան առանձնութիւններով, կարող էին դժուարացնել կառավարութեանը: Միաբանութեան գլխաւորի կարգադրութեամբ առաջուց հեռացրած էին այն «հայր սուրբերը», որոնք չափազանց բարկացկոտ բընաւորութեան տէր, չափազանց առողջակազմ, կամ հակակրելի դէմքի տէր էին: Բնակարանի մէջ մնացել էին տարիներից ձանձրացած ծերերը, թոյլերը, համբերող և համակրելի դէմքեր ունեցողները, մի խօսքով այնպիսիները, որոնք իրանց դէմքերի համբերող և քաղցրին խոնարհ արտայայտութեամբ, կարող էին գրաւել հասարակութեան համակրութիւնը: Մնացել էին նոյնպէս երկու օտարահպատակներ, մի ռուս եզուիտ և մի անգլիական հպատակ շոտլանդացի Ֆորբս: Ֆորբսի ներկայութիւնը անհրաժեշտ էր համարված, որպէս զի աւելի դժուարացնվի պօլիցիականների գործը, որոնք այդպիսով ստիպված կը լինէին ոյժ գործ դնել մի այնպիսի երկրի քաղաքացու դէմ, որ մեծ եռանդով պաշտպանում է իր հպատակների իրաւունքները:

Փարիզի եզուիտների արտաքսելու ձևի մանրամասները յայտնի են ընթերցողներին: Պօլիցիական գործակատարները de Sèvres փողոցում գտան եզուիտների «պահապանների» մի ամբողջ խումբ, որ կազմված էր պատգամաւորներից և սենատորներից, որոնց մէջ կար մինչև անգամ արդարութեան նախկին մինիստր, պ. Էրնու: Այդ բոլոր պահապանները միմեանց առաջը կտրելով և մեծ եռանդով անդադար պնդում էին պօլիցիական գործակատարներին, որ նրանք զեղծում են օրէնքը և յիշեցնում էին այն ծանր պատասխանատուութիւնը, որին Ֆրանսիայում ենթարկվում է այդպիսի զեղծումն գործող իւրաքանչիւր աստիճանաւոր: Այնուամենայնիւ պօլիցիականները չը շփոթվեցին և շարունակ կատարեցին իրանց տուած յանձնարարութիւնը: Նրանք ստիպված էին կողպէքներ կոտրել, անհնազանդ եզուիտների վրա ձեռք դնել, լսել պատգամաւորների և սենատորների վիրաւորանքները:

Մինչդեռ բնակարանի մէջ գլխաւոր դերասանները բարեխղճաբար կատարում էին իրանց դերերը, փողոցում աղմուկ էին հանում և վրդովվում էին կրթված վարձկանները: Պատկերը գեղեցկացնելու համար այստեղ էլ ոչինչ չէր մոռացված: Ամբոխի մէջ նկատվում էին մաքուր, բայց համեստ հագնված կանայք, երեխաները ձեռքին: Նրանք հազիւ էին պահում իրանց արտասուքները: Գտնվեցաւ նոյնպէս մի հարուստ անուանի տիկին, որ կառքով շտապով մօտեցաւ պօլիցիականներին և սկսեց բղաւել: «Դուք ստորութեամբ և անամօթութեամբ էք վարվում:» Երբ պօլիցիականները կամենում էին նրան կալանաւորել, ամբոխի մէջ տասնեակ անձինք գտնվեցան, որոնք նրան յանկարծ ճանաչեցին և սկսեցին բղաւել. «Ձեռք մի տաք, կոմսուհի դ'Արըսկոն է, օտարականուհի: Չէր մոռացված նոյնպէս հասարակական կանանցով լի կառքը: Այդ կանայք բղաւում էին «կորչէն եզուիտները»: Հասարակական կանանցով լի կառքը եզուիտները պատրաստել էին, որ գրգռեն ամբոխը և առիթ տան հակահանրապետական լրագիրներին ասել, որ փողոցում մարտի 23-ի հրամանների օգտին ձայն տուին միայն Փարիզի հասարակութենից մերժվածները:

Եզուիտները հոգացել էին, որ յունիսի 30-ի սարսափելի անցքի մասին միայն ֆրանսիական հակահանրապետական լրագիրները չը խօսեն: Եզուիտները մեծ ճարպկութեամբ կարողացան իրանց կողմը դարձնել ազդեցութիւն ունեցող օտար լրագիրների թղթակիցներին: Օրինակ Լօնդօնի «Times» լրագրի թղթակից պ. Բլօվից եզուիտների եռանդոտ պաշտպան հանդիսացաւ: Յունիսի 30-ին առաւօտը Փարիզից աշխարհի ամեն կողմերը թռան այնպիսի բովանդակութեան հեռագիրներ, որոնք եզուիտների համար ցանկալի էին:

Խաբեբայութիւնը աջողվեցաւ կատարելապէս: Ֆրանսիական կառավարութիւնը կարծես ամաչեցաւ իր համարձակութիւնից: «Պահպանողական» Եւրոպան վրդովվեցաւ: Այն շրջանները և մարդիկ, որոնք դեռ երէկ ծափահարում էին եզուիտների աքսորելուն Պորտուգալիայից, Աւստրիայից, Ռուսաստանից և այլն, որոնք դեռ երէկ եռանդով հաստատում էին Իգնատիոս Լոյոլայի հիմնած միաբանութեան սկզբունքների «հակապետականութիւնը», այդ մարդիկ միաձայն սկսեցին պախարակել պ. Ժիւլ Գրեվիի մինիստրներին ասելով, որ նրանք վախեցան «սև կոմունայից» և, ամենամեծ չափաւորութիւն պահպանելով, փակեցին եզուիտական մի քանի միաբանութիւններ, որոնք Ֆրանսիայում օրէնքի հակառակ գոյութիւն ունէին:

‹ՄՇԱԿԻ› ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 7 յուլիսի: «Times» լրագիրը հաղորդում է, որ Կաբուլի դատարկելը սկսված է: «Daily News» լրագրին հեռագրում են Կ. Պօլսից, որ Ադունի մէջ Փոքր Ասիայում (գուցէ Ադանա, որ Կիլիկիայի մէջ է) քրիստոնեաների կոտորած է եղել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ $94^{3}/_{8}$ ռ., երկրորդ $92^{1}/_{8}$ ռ., երրորդ 93 ռ., 50 կ., չորրորդ 93 ռ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ռ., 50 կ., երկրորդ 223 ռ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ռ. 75, կ., երկրորդ $91^{3}/_{8}$ ռ., երրորդ $91^{1}/_{8}$ ռ., ոսկի 7 ռ. 77 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ $25^{3}/_{8}$ պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա 216 մարկ, 75 պֆ., Փարիզի վրա 267 ֆր. 25 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

նաղդ փող է առաջարկում, այլ մի ստացական է տալիս, որ երբ կունենայ՝ կը տայ.... Անցնում է մի ժամանակ, կալուածները մնում են բարձի թողի արած. վշտացած Սեդրակեանը դարձեալ դիմում է հոգաբարձութեան, որն այս անգամ կամենալով մխիթարել նորան, ներկայացնում են մի նոր անձ իբրև ամենաազնիւ և ամենաբարեխիղճ ոմն պ. Փիրումեանին, որին, իբրև ազնիւ և ազգասէր մարդու, նշանակում են տարեկան 1500 ռուբլի ռոճիկ: Այս անգամ ևս Սեդրակեան հաւատում է հոգաբարձուների խօսքին, որոնք, ի հարկէ, զգուշանում են հասկացնել նորան, թէ պ. Փիրումեանը, որը 400 ռուբլիով գաւառապետի մօտ գրագիր է եղել, արձակվել է իր պաշտօնից, իբրև անազնիւ մարդ: Սակայն ազնուութիւնը մի վատ ախտ է և միայն Փիրումեանի պէս մարդիկներ չեն վարակվել դորանով. 400 ռուբլուց գրագիրը յանկարծ գաւառապետի ռոճիկ ստանալով իր բարեկամ և ազգական հոգաբարձուների շնորհով, ձգտում է աւելի ևս շատ ստանալ, ուստի վարձում է մարդիկ, ուղարկում է կալուածները և պատուիրում է հաւաքել բոլոր եկամուտները և ուղղակի իր տունը բերել: Երբ այդ բոլորը կատարվում է, այն ժամանակ միայն Սեդրակեան հասկանում է թէ ինչ օյին են հանել իր գլխին, բայց հինգ րոպէ շատ անցած...... Այժմ Փիրումեան դեռ դատաստանով պահանջում է իր ռոճիկի մնացորդը, իսկ հոգաբարձութիւնը նորանով է մխիթարվում, որ ամբողջ կալվածների եկամուտի տեղ նա կարող է Փիրումեանի մի երկու ամսվայ ռոճիկը չը տալ: Այսպէս ուրեմն Սեդրակեանի բոլոր աշխատութիւնը, ջանքը կալուածների վերաբերմամբ զուր անցան, և դորա պատճառը, ինչպէս տեսնվեցաւ, ինքն չէ, այլ, իր միամտութիւնն ասեմ, թէ անզգուշութիւնը: Սեդրակեան բացի հոգաբարձուներից ոչ ոքի չէր ուզում ճանաչել, նա կարօտութիւն չէր զգում ժողովրդին դիմել, ուստի և նա չը կարողացաւ ժողովրդական մարդ դառնալ: Ահա 3 տարի է, որ այդ հոգաբարձութիւնը գոյութիւն ունի և այդ 3 տարուայ ընթացքում նա միայն մի անգամ հարկաւոր համարեց գնալ և պտտել կալուածներում մի քանի տեղ. նա մինչև անգամ չը գիտէ, թէ որտեղ են այդ կալուածների սահմանները, ինչ տեսակ անտառներ կան: Հոգաբարձութիւնը, իբրև վաճառականական դասին պատկանող անձինք, որոնք իրենց մի կոպէկը հազար ուսումնարանի հետ չեն փոխի, ոչինչ չէ կարող անել կալուածների համար, ըստ որում նա այն ժամանակ պէտք է անվարձ ճանապարհորդութիւններ անի, այստեղ այնտեղ գնայ, իր դուքանից մի քանի օր զրկվի, ուստի կալուածական խնդրում նա ոչ մի աջակցութիւն չէր կարող անել Սեդրակեանին և չարաչար ևս, և այդ հանգամանքը միայն պատժում է Սեդրակեանին իրեն անզգուշութեան և անփորձութեան համար, ըստ որում ամենքին յայտնի է, որ ներկայ հոգաբարձուների ընտրութեան գլխաւոր պատճառն ինքն Սեդրակեանն էր, որը այդ պարագայում, չը շարժվեց բոլորովին անաչառապէս, այլ ընտրել տուաւ այն 3 հոգաբարձուներին (որոնք միակ հոգաբարձու են հաշվում այսօր իրականապէս) միմիայն նորա համար, որ դոքա Պապաջանեանի հակառակ կուսակցութեան մարդիկ էին: Այժմեան հոգաբարձութիւնը բաղկացած է 8 անձերից, որոնցից 4-ը նոյն իսկ իրենց ընտրութեան սկզբներում պ. Պապաջանեանի պատճառով հեռացել և հրաժարվել են իրենց պաշտօնից, իսկ միւս չորսը—պ. պ. Հախումեան, Բէկլարեան—Բաբայ, Բահաթուրեան—Բաբայ և Թամիրեանց Թադէոս համարվում են բուն հոգաբարձու, բայց գործողները միայն վերջին երեքն են, իսկ առաջինը—պ. Հ. Հախումեանը, որ ամենից ազնիւ և միակ բանիմաց անձն է, դժբախտաբար մինչ վերջին ժամանակներս տնական հանգամանքներից ստիպված, չէր մասնակցում գործերին: Այդ պատճառով միակ ասպարէզը մնացել էր պ. պ. Բէկլարեանին, Բահաթուրեանին և Թամիրեանին, որոնք մի մի վաճառականական տիպարներ են ներկայացնում և հոգաբարձութեան քօղի տակ ծածկում են իրենց գործերը նոյն իսկ ուսումնարանի վերաբերմամբ: Ում յայտնի չէ Շուշում որ հոգաբարձու պ. Բաբայ Բէկլարեանը ահա մօտ 10 տարի է գրաւել է անիրաւաբար քաղաքի ամենալաւ տեղում գտնված ուսումնարանապատկան հողը, շինել է իրեն համար պարտէզ առանց մի կոպէկի վարձատրութիւն տալով ուսումնարանին: Ում յայտնի չէ, որ նորա բարեկամ Յովսէփ Ղուկասեանը, որն առաջ եղել է հոգաբարձու (Սարգիս եպիսկոպոսի ժամանակ) և այժմ կանդիդատ է, իր հոգաբարձութեան ժամանակ գրաւել է պ. Բէկլարեանի հետ միասին դարձեալ ուսումնարանապատկան գետին և իր համար տուն կառուցել: Թէ պ. Բէկլարեան և Ղուկասեան, իբրև հոգաբարձուներ, իրենց դէմ դատաւոր չեն հանդիսանում, այդ բացատրելի է, թէ պ. Բահաթուրեան և Թամիրեան նոյնպէս չեն հանդիսանայ ուսումնարանի իրաւանց պաշտպան ընդդէմ Բէկլարեանի և Ղուկասեանի, իբրև նոցա ամենամերձ ազգական, այդ ևս բացատրելի է և կարելի այդպիսի չարչիների համար, բայց որ Արիստակէս վ. Սեդրակեանն է լռում և չէ հետևում յափշտակողներից խլել ինչ որ նոքա գողացել են, դա մեզ շատ զարմացնում է, մանաւանդ որ մի քանի ամսից յետոյ կը լրանայ տասն տարին, յորմէ հետէ այդ գետինները յափշտակվել են և այն ժամանակ ուսումնարանը կը կորցնի որ և է իրաւունք վէճ բաց անելու: Հաւատացնում ենք հ. Սեդրակեանին, որ այդպիսի երկերեսանի քաղաքականութեամբ ոչինչ չի շահի և միմիայն միջոց կը տայ բարաներին շարունակելու իրենց կեղտոտութիւնը: Եթէ հոգաբարձու Բէկլարեանը կամենայ, կարող է հիմն դնել օրիորդական դպրոցի շինութեան, և դորա համար մենք նորա ջիբից մի կոպէկ անգամ չենք պահանջում, բաւական է, որ նա գործածի այդ շինութեան վրա այն գումարը, որ մի բարեպաշտ մարդ, մեռնելիս յանձնել է իրեն պ. Բէկլարեանին, իբրև իր կտակակատարի: Շուշաքաղաքացի պ. Խանդամիրեան մեռնելիս կտակել է 32,000 ռուբլի, որը և յանձնել է պ. Բէկլարեանին գործածելու «աստուածահաճոյ» գործի համար: Եթէ պ. Բէկլարեան հասկացող և ազգասէր մարդ է, ինչպէս կամենում են հաւատացնել մեզ ոմանք, նա իբրև հոգաբարձու պէտք է լաւ համոզված լինի, որ Շուշին, իբրև հայ քաղաք խիստ կարևորութիւն ունի մի հատ օրիորդական դպրոցի, և ինչ բան կարող է աւելի աստուածահաճոյ լինել, քան իգական սեռի դաստիարակութեան համար մի սրբավայր, որտեղ չքաւոր օրիորդներ կարող էին ձրիաբար ուսում ստանալ և անմահացնել կտակողի անունը: Բայց ամբողջ 3 տարի Սեդրակեան և ուսուցիչներ չեն կարողանում համոզել Բէկլարեանին այդ բանի մէջ: Չէ որ նա գործնական մարդ է և դու ինչ կուզես ասա, բայց այդ փողը իր համար շահեցնել ամենալաւն է. Պ. Բէկլարեան անշուշտ մոռանում է, որ այդ փողը մի րոպէ անգամ իր մօտ պահելու իրաւունք չունի:—Սակայն ընթերցողը թող չը կարծէ որ մեր պարոն հոգաբարձուները չունեն ազգասիրական գործեր և ոչ մի օգուտ չեն տուած ուսումնարանին. ոչ. նոքա իբրև վաճառականներ, դիմում են ամեն միջոցի ուսումնարանը հարստացնելու համար և յաջողութիւն են գտնում իրենց ձեռնարկութեան մէջ: Հոգաբարձու Բաբա Բահաթրեան, իր նպատակին աւելի շուտ հասնելու համար, յարմար է համարում ուսումնարանը առևտուրի դուքան շինել և հաւատարիմ դուքանական կանոններին նա ամբողջ ժամերով աշխատում է մի կոպէկ աւելի հանել խնդրարկուից: Ահա մի խեղճ կին իր որբի ձեռքից բռնած դիմում է պ. հոգաբարձուին, և խնդրում, որ հոգաբարձութեան կողմից հրատարակված յայտարարութեան համեմատ իր աղքատ որդուն ընդունեն ի թիւս ձրիավարժների:—Ոչ, ասում է պ. Բաբան, ես կընդունեմ որդիդ, երբ դու կը տաս 5 ռուբլի:—«Աստուած գիտէ, որ յետին թշուառ աղքատ եմ, ոչինչ չունեմ:»—Դէ, լաւ, 4 ռուբլի 50 կոպէկ տուր:—«Չեմ կարող:—Հը. 20 կոպէկ էլ կը պակասեցնեմ... Եւ այսպէս շարունակվում է մինչև որ 5 ռուբլուց իջնում է 2 ռուբլի 20 կոպէկ և ընդունում է աղքատ երեխային: Շատ անգամ պ. Բաբան դարձեալ խնայողութիւն է համարում մի 20 կոպէկ պոկել նորանից, որին հոգաբարձութիւնը վճռել է բոլորովին ձրի ընդունել: 'Ի հարկէ, շատերը պ. Բաբայի այդպիսի ջերմեռանդութիւնը վերագրում են նորա աստուածապաշտութեան, ուստի և չեն զլանում գովասանք թափել նորա գլխին:

(Կը շարունակվի)